



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

ՀԵ ՇԱԲԱԹ ԹՃ

22 ԱՊՐԻԼ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԵԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԲԸ	Տարեկան 54 ՂԲԸ	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱՅԱՌԱՅՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղալ Գեյ խանին ճակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Բ. ԱՎԱԴՐԻԱՆ) شرکت مرتبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասկի Թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
Վիանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղտուկի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարի լագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ :

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

ԲԵՐՍ.

- (1. Մեծ փողոց, Պօս Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱՆԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱՆԱՏ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 .

ՍԵՐԻՏԱՐ

- (2. Գրչը Պօյու , Թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաբրիկաներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , Թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզդուլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱՄ 1860 ԻՆ Ի ՎԻԵՆՆԱ



ՆԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրաւագրուի եւ Պահեստի գումար

31,008,000 ՅՐԱՆՔ

ՀՐԴԵՋԻ ՃԻՒՂ

Իրաւագրուի եւ Պահեստի գումար

17,000,000 ՅՐԱՆՔ



ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը
մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի և առագաստանաւի վրայ :

Ընկերութեանս զբաղմունքն է ՔՐԻՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
զբաղմունքն է Պոլիս , Ալեքանդր խան , Թիւ 11 — 16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիւզոր ներկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 17

ՇԱԲԱԹ

22 ԱՊՐԻԼ 1906

ՀՐԱԻԵՐՈՎ ՊԱՏԱՐԱԳ

Հայ եկեղեցիին տարեգրութեանց մէջ մինչեւ մէկ աստիճան տարօրինակ երեւոյթ մըն էր ա՛յն հրաւերը, զոր Ղալաթիոյ Խնամակալութիւնը ըրաւ անցեալ կիրակի օր եռաձայն պատարագին համար։ Ծաղիկ առաջին անգամ տուաւ այդ լուրը, Սուրհանդակ արտատրպեց, յետոյ հերքեց, բայց հերքած թիւին մէջ իսկ երբ պատարագին նկարագրութիւնը կ'ընէր, մեռնալով թերեւս վերի պարտաւորիչ հերքումը կ'ըսէր . . . «Հրաւիրեալներուն մէջ կը նշմարուէին . . .» եւլն. եւլն. եւլն. :

Եւ տակաւին կ'ըսեն թէ մեր եկեղեցիին մէջ ծայրայեղ պահպանողականութիւն կայ . . . :

Եւ տակաւին Հոռոյ կը պնդէ թէ եկեղեցիին հին կերպերը և կանոնները չենք փոխեր :

Դեռ ի՞նչ կ'ուզէք, Գառթ տը Վիլիթով մարդ կը հրաւիրենք պատա-

րագի, Ժողովուրդին պարզ անհատները անկէց մերժելու կ'ենենք, Ժամկոչ Ղուկաս աղբարներուն միջոցաւ Ժամէն դուրս կը հանենք բարեպաշտները սա՛ կամ նա հրաւիրեալին հանգիստ տեղ տալու համար :

Բայց նախ հարցնենք թէ Ղալաթիոյ Խնամակալութեան ո՞վ տուաւ այս բացառիկ իրաւասութիւնը : Հրաւերով պատարագ մատուցանելու, ընկալեալ բարեպաշտութեան համաձայն կիրակիի արարողութիւնը կատարելու առթիւ նոյն Խնամակալութեան բռնած այս ընթացքը վաւերացուած է Ս. Պատրիարքէն : Կրօն. Ժողովին քահանայ անդամներուն լուրջ ուշադրութեան կը յանձնենք այս խնդիրը : En privé պատարագ, որուն հայերէն թարգմանութիւնն է մինչեւ աստիճան մը թիւ Պատարագ, պարզապէս ամօթ է ասիկա :

Օտարները նա՞ր պիտի հիանան մեր եկեղեցիին երգեցողութեանց վրայ : Ղալաթիոյ Խնամակալներո՞ւն մնացած էր սքանչացում պատճառելու այդ երգեցողութիւններուն համար : Արեւելեան բոլոր եկեղեցիներուն մէջ իսկապէս հայ եկեղեցին է որ ներդաշնակ, հոգեցունց և հոգեպարար եղանակներովը պատկառանք ազգած է օտար քրիստոնեայ դաւանութեանց, և Ղալաթիոյ Միւթէվէլիները չա՛տ միամիտ մարդիկ պէտք է եղած ըլլան, իրենց եռաձայնին ուժովը իրենք զիրենք ցուցադրելու օտար հրաւիրեալներուն առջեւ, անանկ մը կարծեցնելով թէ՛ կը տեսնէ՞ք, ահա մեր՝ Միւթէվէլիներու՝ շնորհիւ է որ հայ եկեղեցին այսօր կը պայծառանայ, կը շքաւորուի : Կօչկակարն ցկօշիկ, և Ղալաթիոյ Խնամակալութիւնն ալ ցկեղրոնական վարժարան : Այդ Խնամակալութիւնը առաւելով իսկ իր պարտքը կատարած կ'ըլլայ եթէ իր խնամքին յանձնուած այդ վարժարանին նիւթական և բարոյական մատակարարութիւնը վարէ գոհացուցիչ կերպով : Եռաձայնով և հրաւերով պատարագը իր գործը չէ : Շատ իսկ է եթէ պահպանուի մեր հին երգեցողութիւնը իր կանոնաւորութեան մէջ, քանի որ նորասիրութիւնը ասանկ անպատշաճ վարմունքի կը տանի մեր Ղալաթիոյ Միւթէվէլիները : Մարդիկ Աստուծոյ, աղէ՛կ, եթէ եռաձայնը — որ վերջապէս ամբարշտութիւն է չենք ըսեր — կ'ուզենք ընդհանրացնել, ի՞նչ հարկ կայ Պատարագին տալ նուագահանդէսի մը հանգամանքը, պարահանդէսի մը աշխարհիկ երեւոյթը, և քարթ տը վիզիթներով օտարները հրաւիրել՝ Ս. Լուսաւորիչի քիթին խընդացնելու համար :

Դարձեալ կը հարցնենք, Պատրիարքարանի Կրօն. Ժողովը ի՞նչ կը բանի, երբ ասդին Ղալաթիոյ մատակարարները չքնաղ բաներ կ'ընեն իրենց խելքովը : Լաւ է որ ամուսնալուծման քանի մը դատեր պակաս տեսնուին և ապօրինի պսակ ընող քահանաներուն քանի մը փակեղները պակաս վար առնուին՝ քան թէ թողուի որ եկեղեցիին հոգեւոր կարգապահութիւնը թուինայ նուագի սիրահար քանի մը ջոջերու քմահաճոյքը տեղը տանելու, գոհացնելու համար : Եթէ հարուստները եռաձայնին համար ժամ պիտի գան, վա՛յ եկեր իրենց բարեպաշտութեան, եթէ Տիկին Հարուստները զիրենք հոգիով ցնցելու համար բաւական չեն գտներ եկեղեցիին հին երգեցողութիւնը որուն համար կըզմայլէին իրենց պապիկները և մամիկները, և չեն քաշեր հաւասար նկատուիլ Ամենակալին առջեւ և քով քովի կենալ ժողովուրդի զաւակներու հետ, Արամ Անտոնեանի ըսածին պէս կրնան մասնաւոր մատուռ մը շինել իրենց համար, տէր տէրներ, վարդապետ և անխուսափելի եպիսկոպոս պահել ի ձեռն և շնորհիւ արհիապատիւ Մամոնային, և խնդիրը կը վերջանայ :

Բայց եթէ իրենց տուած ժամուցներուն փոխարէն, իրենց ըրած նուէրներուն փոխարէն, ասանկ յաւակնութիւններ պիտի ընեն, ասանկ պահանջումներ պիտի գողացնեն, « մենք զատ պատարագ կուզենք », « մենք եռաձայն կուզենք », « մենք երգեհօն կ'ուզենք, որ ժամ երթանք », allons donc ! « Առ դրունս ելէք և աղօթեցէք » : « Մի՞ ոք ի թերեհաւատից և յանմաքրից մերձեցի յաստուածային խորհուրդս » : Եթէ իրենց տուած ճաշերուն և համա-

գամներուն փոխարէն, իրաւունք ունենալ կը կարծեն եկեղեցիին կարգը սարքը այլափոխելու, եկեղեցին ճաշ տուողներուն ալ չի վերաբերիր, ճաշ տուողներուն ալ, եկեղեցին Աստուծոյ տունն է, և Աստուծոյ ճշմարիտ զաւակներուն սեփականութիւնն է, և երկրի վրայ անոր պաշտպանը Օսմ. Բարեխնամ Պետութիւնն է:

Հնադարեան հայ եկեղեցին օտար քրիստոնեաներուն ո՛չ սքանչացումին պէտք ունի և ոչ միջամտութեան: Մեր եկեղեցին մեզի կը վերաբերի միայն, ո՛չ կաթոլիկը գործ ունի հոն և ոչ բողոքականը, և Ղալաթիոյ Ազնուաշուք Խնամակալները ի՞նչ իրար անցեր են, եռաձայնով օտարները հրապուրել և բուն եկեղեցիին զաւակները ուժացնել կուզեն իրենց ժամէն ու աղօթքէն: Ո՛վ տուաւ իրենց այդ իրաւունքը: Իրենց լրագրի բաժանորդագրութեան ուժով կը կարծեն իրաւունք ունենալ թերթերու վրայ ազդելու և գովեստ ու փող հնչեցնել տալու անպատճառ փրենց կարգադրութեան համար: Ամօ՛թ է երկուստեք այդպէս մտածողներուն համար, երբ խնդիրը եկեղեցիին հոգեւոր կարգապահութեան այլափոխման վրայ կը դառնայ:

Հարուստները եկեղեցիէն դուրս ո՛րչափ ուզեն կրնան նուազ լսել իր զանազան ձեւերովը, գործիական և ձայնական, և գործնական: Աշխարհիկ այդ հաճոյքներուն առթած երեւելի և աներեւոյթ մեղքերը քաւելու և միմիայն աղօթելու համար պէտք է եկեղեցի դիմեն, թօթափելով նուազի, հրաւերի ամէն մտածում, առ ոտն կոխելով ջոջի մոջի այլանդակութիւնները, որոնք կ'երթան մինչև իսկ ապաստան կը փնտռեն սրբութեանց խորանին ստորոտը:

S.

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

ՕՍՄ. ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

ՊԵՏՐՈՍ-ՋԷՔԻ ԷՖԷՆՏԻ

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Պետական լեզուն մեր ազգային վարժարանաց մէջ դասախօսող հայ. ուսուցիչներուն մէջ, առաջնութիւնը կուտանք Պետրոս Էֆէնտի Կարապետեանի, կրկին պատճառներով. նախ՝ որովհետեւ իր այդ լեզուի մէջ ունեցած անժխտելի կարողութեանը կը միացնէ բազմակողմանի հմտութիւն օտար լեզուներու ու գիտութեանց, երկրորդ՝ որովհետեւ մեր ազգ. գլխաւոր վարժարաններուն մէջ կը դասախօսէ, եւ երրորդ՝ որովհետեւ պետական պաշտօնեայ ա՛լ է սիրուած գրեթէ ո՛րքան մեր համայնքէն նոյնքան մըն ալ եւ առաւել օտարազգի ականաւոր անձնաւորութիւններէ:

Իր ուսումը առած է Պէրպէրեան վարժարանի մէջ, որուն պատուաբեր ու օգտակար հանդիսացած է, եւ երբեմն ալ անոր տեսչութիւնը վարած, յարգելի Ուսուցչապետին բացակայութեան պահուն: Կարապետեան Էֆէնտիի ուսուցչական ասպարէզը կըսկսի իր դպրոցականի կեանքէն իսկ ու իր տաճկաբանի համբաւը շատ չուտ կը տարածուի, անոր համար մանաւանդ որ իր մէթոտը կը տարբերի բոլորովին այն մէթոտէն զոր մեր հին տաճկաբանները ունէին եւ որմէ ոչ ոք բան մը կը հասկնար: Պետրոս Էֆէնտի առաջինը եղաւ որ Օսմանեան լեզուի մեր վարժարաններու մէջ ուսուցման մէջ կարգ ու կանոն դրաւ, եւ զայն սիրելի բրաւ ամէնուն առհասարակ:

Կարապետեան Էֆէնտիի դասախօսութիւնները միայն մեր դպրոցներուն մէջ չեն պարփակուիր, այլ օտար վարժարան ալ կը յաճախէ ու մանաւանդ օսմաներէն լեզուն կուսուցանէ բարձրաստիճան ու ականաւոր անձնաւորութեանց, մասնաւոր դասերով:

Առաջինն ինք եղած է որ թուրք գրականութեան վրայ խօսած է հայ. թերթերու մէջ եւ լեզուաբանական խնդիրներ յու-

զած, նոյն իսկ երբեմն թուրք թերթերու մէջ, ու այս պատճառաւ յաճախ ալ գնահատուած հեղինակաւոր թուրք գրագէտներու կողմէ:

Պետրոս էֆ. միշտ յամառ աշխատող մըն է ու հեղինակ բազմաթիւ օգտակար դասագիրքերու, յիշենք ատոնցմէ նախ՝ իր ֆերականները, որոնց մէջ տպագրին դիմաց ձեռագիրն ալ դրուած ըլլալով կրկին կերպով օգտակար կրնան ըլլալ ուսանողներու:

Ռեհնիրումի գրաւար Ա. եւ Բ. տարինները, որոնք իրենց բազմազան պարունակութեամբ եւ գիտակցական վարժութիւններով ճոխացած են:

Պաշտօնական գրութեանց, վաճառականական նամակներու, նմոյշներու, ինչպէս նաեւ շարադրութեան կանոններ, լաւ կերպով բացադրուած են իւր Նեվսէսքէ անունը դասագիրքերուն մէջ, նշանաւոր են իր սարփերը, մանաւանդ ընդարձակը, որուն մէջ մանրամասն կերպով բացատրուած են Օսմանեան լեզուի նրբութիւնները, որ որքան աշակերտաց նոյնքան մըն ալ եւս առաւել անհրաժեշտ է զարգացելոց համար:

Հեղինակը ունի նաեւ, Նիւմիւնէյի ետեպիյաթը օսմանիյե վիւ մալիւնաթը ֆեհնիյե անունը դասագիրք մըն ալ, ուր կերեւան նշանաւոր գրագէտներու բանաստեղծական գրութիւններն ու գիտական այլ եւ այլ ծանօթութիւններ, ասոնցմէ զատ զուտ Արաբերէնի եւ զուտ Պարսկերէնի համար մէյմէկ դասագիրք ունի, որոնց մէջ կը տեսնուի այն պարզ ու հասկնալի մէթոտը, որուն ցարդ հանդիպած չէինք նոյն օրինակ դասագիրքերու մէջ:

Կարապետեան էֆէնտի գեղագիր մըն ալ է մի եւ նոյն ատեն, եւ ունի հրատարակած 5 տետրակէ բաղկացեալ գեղագրական մէթոտ մը:

Կարապետեան էֆէնտի ձեռնարկած է կարեւոր եւ ընդարձակ գործի մը, որուն անհրաժեշտ պէտքը, արդարեւ զգալի էր մեր մէջ, այն է իր հայերէնէ տաճկերէն, ընդարձակ բառարանը, որուն մէկ մասը տպուած, եւ միւսն ալ մամուլ տակ է:

Տաճկերէնէ-հայերէն ընդարձակ բառարան մըն ալ ունի որ միւսին հետ քիչ ատենէն լոյս կը տեսնէ:

Թէեւ իր հեղինակութեանցը թիւը 30ը կանցնի, բայց անոնց մի առ մի թուումը շատ երկար պիտի ըլլար եւ կրնայ մասնաւոր ուսումնասիրութեան մը նիւթ կազմել:

Իր դասագիրքերը գրեթէ հայ. եւ օտար վարժարանաց մէջ կը գործածուին, եւ վերջերս ուրախալի է որ յունաց Պատրիարքարանի Ուսումն. խորհուրդը իր վաւերացեալ դասագիրքերուն կարգը անցուց, իբրեւ օսմանեան լեզուի ուսուցման ամենայարմար դասագիրքեր:

Կարապետեան էֆ. հմուտ է բաց ի Օսմ. Արաբ. ու Պարսկերէն լեզուներու, Ֆրանս. Անգլ. եւ Յունարէնի:

Զէքի էֆ. Տաճկաբանն է Պէրպէրեան վարժարանի, ինչպէս նաեւ թուրքերէնի ուսուցիչն Բերայի էսայեան, Գատը-գիւղի Արամեան, Սկիւտարի Ս. Սաչ, Մաքրի-գիւղի Տատեան ու Ազգ. Որբանոցի դպրոցներուն:

Կանդամակցի Կեդրոնական Ուսումնական խորհրդոյ, որուն գործօն անդամներէն է: Իր թէ իբր ուսուցիչ օսմանեան լեզուի, եւ թէ իբրեւ Պետական պաշտօնեայ մատուցած բարւոք պաշտօնները Կայսերական կառավարութեան կողմէ գնահատուելով արժանացած է Միւթէմայիզի աստիճանի ու Դ. Օսմանիյէի եւ Դ. Մէճիտիյէի պատուանշաններու:

Կարապետեան էֆէնտիով ուսուցչութիւնն կը բարձրանայ, ան ունի հասցուցած ստուար թիւ մը կարող աշակերտաց:

ԼԵՒՈՆ

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Բաղնիքը ձառնի մեջ

Ձառնական բաղնիքը քիչ շատ մեր տեղական բաղնիքները կը յիշեցնէ, միայն սատարներութեամբ որ ճաբոնցին ամէն օր բաղնիք կը յաճախէ, եւ լուացումի համար բաղնատարար խիստ աննշան վարձք մը կը վճարէ, այսինքն 2 սէնս, որ մեր 20 փառային կը հաւասարի:

Բաղնիքին ջերմութեան աստիճանը 55°-60°-ի կը հասնի: Բնական է թէ մարմինը

այդ սաստիկ տաքութեան չի կրնար երկար ատեն տոկալ, որով ճարոնցին կը ստիպուի քանի մը վարկեանէն դուրս ելնել, կաս կարմիր կտրած եւ ուռքէն մինչեւ գլուխ քրտինքի մէջ թաթխուած: Այն ատեն իր թուական իր կ'ամբողջացնէ, տաք եւ պաղ ջուրի լոգանք մը ընելով մասնաւոր պզտիկ տաշտերու մէջ:

Այս չափազանց տաք լոգանքը զգալի կերպով կը բարձրացնէ լուացուողին մարմնոյն ջերմութիւնը, որ երկար ատեն կը մնայ ենթակային վրայ, դանդաղորէն կորոնցնելով իր ներգործութիւնը:

Լոգանքի այս մէթոտին շնորհիւ ճարոնցին յաջողած է դիւրութեամբ տոկալ ձմեռուան սաստիկ ցուրտերուն:

Մեր սովորութիւններուն եւ առողջապահական օրէնքներուն բոլորովին հակառակ, ճարոնցիները իրիկուան ընթրիքէն անմիջապէս վերջը բաղնիք կ'երթան, առանց սակայն անկէ ու եւ է անպատեհութիւն մը ծագելու:

...

Անքել հեռաձայնը Ճարոնի մեջ

Նաւային երկրաչափ մը, Մ. Քինարօ, անթել հեռաձայն մը հնարեր է, զոր ճարոնական ծովային սպարապետութիւնը ընդուներ է իր բոլոր մանրամասնութիւններով:

Այդ նորահնար գործիքը խիստ գոհացուցիչ արդիւնք տուած է, եւ կը կարծուի թէ անոր շնորհիւ կարելի պիտի ըլլայ պատերազմի ատեն բերանացի հրամաններ արձակել տարբեր մարտանաւերէ:

Այս գիւտին մանրամասնութիւնը բոլորովին գաղտնի կը պահուի ճարոնի մէջ:

ՀՐԱՉԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ՈՍԿԻՈՎ

Ես ալ բարեգործ եղայ, եւ հինգ հատիկ գեղնորակ ոսկինոց բարեգործ, ինչ որ ինծի իրաւունք կուտայ եօթը պորտովս պառկելու Հիւանդանոցի եւ կամ այլ հաստատութեան մէջ, ա՛, ներեցէք ազդերուն մէջ:

Անոնք՝ որոնք սկեպտիկ կամ սեպտիկ են, կրնան յօդուածս մինչեւ վերջը կարգալու համբերութիւն ունենալ եւ հաւատալ: Բայց նախ ինքզինքս ծանօթացնեմ սիրուն քառեակով մը.

Ես գրագիր Համբարձում
Կրնեմ գումար եւ քարձում,
Խնդիր մ'անանկ եմ պարզում
Որ չըլլուի մեկ հարցում:

Մտիկ ըրէք հիմա՝ եթէ փորերնիդ պինդ այսինքն կուշտ ու կուռ է:

Տանկոյի (ամուսնացած) համակիր մը, ապուշութիւնը ունեցաւ ձեռքս հինգ հատիկ ՕՍՄ. ՈՍԿԻ սահեցնելու:

Թէ ինչպէ՞ս անոնց վրայէն մտայ եւ տակէն ելայ, հապա լսեցէք պարոնայք:

Նախ մտադրեցի Թրանսվալի թուղթ զընել, բայց չգնեցի, կարծեմ աղէկ ալ ըրի:

Յետոյ խենդ գաղափարը ունեցայ, ըսկերներու խնճոյք մը սարքելու, բայց անկէ ալ վազ անցայ, տեսնելով որ հարկ էր ոսկիին մէկ հատը աւել տալ կամուրջէն անցնելու համար:

Դեռ խել մը գաղափարներ ալ ունեցայ, զորս հիմա չեմ յիշեր դժբախտաբար, խելքըս քովի տունը ձգած ըլլալով՝ փոխան 30 փարայի:

Վերջապէս, երբ գրասեղանիս առջեւ նստած կը մտմտայի, թէ ի՞նչ ընեմ այդ հինգ ոսկին, յոնկարծ անկիւն մը նետուած հին «Ա. Մամուլ» մը աչքիս զարկաւ:

Եւ որովհետեւ ամէն փարա ունեցող ինքզինքը զարգացած, եւ հետեւաբար թաղականի կամ հոգաբարձուի քանտիտա կը կարծէ, ես ալ գրագէտի հովով մը սկսայ թղթատել զայն:

Որքան մեծ եղաւ ուրախութիւնս, երբ այդ թիւին մէջ գտայ Ալփիարէնց Արթին աղային 160 զրուշով բարեգործութիւնն առնուն հունտալից (պէտք է կարդալ հմտալից) յօդուածը:

Ասիկա կրնար ինծի իրր փարայակերութեան ծրագիր մը ծառայել, ուստի սկսայ ուշի ուշով կարդալ:

10-20 անգամ մը կարդալէ ետք, գրիչը ձեռք առի եւ թարմ տպաւորութիւններու տակ, ու բարեսրտական զգացումներով հա-

մակուած՝ հետեւեալ նուիրական ցանկը չի-
նեցի:

Հիւանդանոցին 1 ոսկի, պայմանաւ որ 15
անգամ շնորհակալիք գրեն:

Գալֆաեան Որբանոցին 1 ոսկի, պայմա-
նաւ որ կէս տուգինա չապիկ կարեն ինծի:

1 ոսկի ուսուցչաց «օգնութիւն», օգնու-
թիւն շուտով հասիւր սնտուկին, ձեռամբ
x թերթին, պայմանաւ որ գոնէ կէսը տեղը
հասցնէ:

1 ոսկի այն ինչ բարեկամիս, ուզածին
պէս ուտելու համար, մարդ չխառնուելու
պայմանաւ:

¹/₂ ոսկի իբր փոխարէն տարեկան մը
«Հանրագիտակ» ի բաժանորդագրութեան,
նուէր առ ամենայն կղերականս պոլսականս:

Համագումար ⁴/₁ ոսկի = 486 շրուշ:

20 զրշ թաղիս աղիսա-խնամին:

20 զրշ ազնիւ բարեկամիս խաւ մալին,
Ֆրանսերէն բառարան մը գնելու համար:

10 զրշ ան գրագէտներուն որոնք կա-
մուրջն անցնելու դրամ չունենալով՝ կա-
մուրջին գլուխը կը սպասեն խմբագրի մը
անցնելուն:

3 զրշ թալիթա տուտուին, անգամ մը
իր աղջիկը ինծի ցուցնելու համար:

10 փարա ալ ... ուզողին:

Այսպէս 539 զրշ 10 փարայի հաշուեկշիռ
մը պատրաստեցի:

Իսկոյն կամուրջն անցայ, իրենց տեղերը
հասցնելու համար, վերը յիշուած նպաստ-
ները:

Ալ չեմ կրնար գոհունակութիւնս եւ յոգ-
նութիւնս նկարագրել ձեզ, Մեծ-Նոր խան
վազէ, անկէ այն ինչ թերթին, անկէ ալ
ոտքերդ շալկէ այս ինչին:

Երբ ամէն բան վերջացուցի, պարտքը
կատարած մարդու մը սրտի անհուն բերկ-
րանքով ժամացոյցը (իմին չկարծէք հա՛)
նայեցայ:

Ժամը ճիշտ 11 ¹/₂ ն էր, Բերա դառնա-
լու ժամանակ, դրպանս հինգ ոսկիէն 20
փարա մնացած էր, տասը տրամադրելի,
տասն ալ կամուրջին:

Դանդաղ քայլերով «Մանգումէ»-ի տպա-
րանին առջեւ հասայ, սոսկալի յոգներ էի,
առտուն ժամը 1 էն մինչեւ 11 ¹/₂ ոտքի վրայ

էի, նայեցայ որ շերտիս մը սքանչելի օ-
չարակ կը ծախէ կոր, «սա տասնոցն ալ ա-
նոր տամ տէ խալըսիմ» ըսի, մտեցայ մար-
դուն, տասնոցը տուի, գաւաթը լեցուց, լե-
ցուն գաւաթը ձեռք առի, չրթունքիս տարի-
բայց յանկարծ ձեռքերս դողալ սկսաւ, մը-
տածեցի ըրած ապուշութեանս վրայ, մեղ-
քըցայ շիտակը հինգ ոսկին, լաւագոյն կեր-
պով կրնայի զանոնք ուտել, եւ դարձեալ
բարեսէր անձ մը ըլլալ, քանի որ Գրիստոս՝
մտքէն անցընելը իսկ կատարուածի տեղ
կ'ընդունի:

Բարկութիւնս չափ չունէր, եւ ո՛վ դըժ-
բախտութեանս, գաւաթը ձեռքէս ինկաւ
կոտրեցաւ, օչարակավաճառը որ «պոյուրըն
էֆէնտիմ» ով ընդունած էր զիս, ձեռքը օ-
ձիքիս տարաւ, «դրամը» գոչեց, այո՛, ես
ալ դրամը կը փնտռէի կոր:

Կունակէս վար պաղ քրտինք մը իջաւ,
մարդուկը հատ մը փակցուց ինծի, վար ինկայ,
գլուխս կը ցաւէր կոր եւ ... արթնցայ ըն-
դոստ քունէս:

Իրաւ անկողնիս վրայէն մտած եւ տա-
կէն ելած էի, որովհետեւ ուժգին շարժու-
մով մը վար, տախտակամածը գլտորած էի:

ԼԵՒՈՆ ՀԱՄԱՐԱՐՁՈՒՄԵԱՆ



ՅԱՆԳԵՐՈՒԹԱՓՕՐ

.....

ԿԸ ՎԱԾԼԷ՞, ԵՐԲՈՐ ...

Կը սիրէք որ միշտ մեզ դէմ բարկանաք,
Ո՛վ դուք ստեղծուած կողէն մեր՝ կանայք:

— Առանց ձեռք տալու սրտին բանալին
կը թողու կին մ'որ իր ճամբան հալին:

— Կիներն՝ աւելի խորամանկ օձէն,
Սիրտերնիս, աւա՛ղ, անդադար խոցեն:

— Աղջիկներէն շատեր՝ լուրջ սիրոյ առանց,
Սիրտերնին կուտան հանդիպող արանց:

— Քալած ատեննին շատ կիներ banale
Մինչեւ ծունկերնին կը սիրեն բանալ:

— Աչք, յօնք ընելով միշտ պատուհանէն
Աղջիկներն մանչեր գլխէ կը հանեն:

— Իբր զարգացած՝ աղջիկներն արդի
Վարքով ու բարքով նմանին յարդի:

— Կիները նախ մեզ ետեւնուն քաշեն,
Բայց յետոյ կուտան պատրանքի cachetն:

— Շատ կիներ չինած գրգռիչ կերտան
Փողոցին մէջէն անպատճառ կերթան:

— Աղջիկ, փէշերդ այնպէս հանգրիճես
Որ բացատրելու պակսի բառ գրիչէս:

— Կիներն սրգողին երբոր չփակէն
Աչքերնին իրենց լեցուն չփակեն:

— Կին, աղջիկ հիմա դէմքերու ներկին
Հոգ տանին քան թէ ձրքերու ներքին:

— Աղջիկներն իրենց լանջքերով քառե
Թունդ հանեն նոյն իսկ սիրտերը քարէ:

— Շատ անգամ, այո՛, ոչ թէ էրիկին
Այլ ուրիշի մը սիրով էրի կին:

— «Կը սիրեմ քեզ, ի ձանձրացած փոխէն
Երկու սիրողներ գործը կը փոխեն:

— Իրաւ, քիչ մը շատ զոքանչներն ամէն
Միշտ փեսաներնուն կախորժին համէն:

— Գուպաներու մէջ ցուցադրած à jour
Աղջիկ մ'իր բումբեր փողոցներն գայ ժուռ:

— Մէկտեղ դառնալով քանի մը danse եր
Մանչ, աղջիկ յանկարծ իրարու տան սէր:

— Կիներ կան որ դեռ երէկուան մանկան,
Գլխէ հանելու համար՝ չուրջ ման գան:

— Աղջիկ մը առանց ընտրութեան մեկին
Սէր տայ նոյն ատեն միւսին, մէկին:

• • •

Բնական է թէ չեն վայլեր երբէք
Ասոնք, ո՛վ կիներ, ձեզի՝ բայց երբ էք
Գիտակ ձեր կոչման, ալնիւ ու ընտիր,
Ու պատուոյ մասին նախանձախնդիր:
Վարքով ու բարքով անբասիր, պարկեշտ,
— Եւ ոչ թէ թեթեւ, լոկ միսէ պարկ հեշտ! —
Զերծ արարքներէ ասանկ գռեհիկ,
Լուրջ զգացումներ, կինե՛ր, կրէ՛ք:

ԷՍ—ՍԵ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱՆԳԵՐ

(ՏԱՆՅԷԶԻ)

ՆՄԱՆՈՂԱԲԱՐ

Ինչպե՛ս սիրս չի տալ կայտառ Գուրգենին,
Բայց ան ալ սրտանց կը սիրէ ֆենին:

Աղուոր սրդայ է կ'ըսեն Արշաւիր,
Բայց դասողութեան չ'ունի չափ կըշիռ:

Պե՛տ է հոգիս տալ ֆերքող Արշակին,
Ափսո՛ս, կը մերժէ ան զաւառի կին:

Դեղին պեխերով ժոռն ժան Յովսէփին,
Մը՛սֆին մեջ խորհուրդի սասանի կ'եփին:

Հա՛, մի՛սքոյ դրի ձեռք տալ Մարկոսին,
Ան սրդամարդ է ֆեզ չ'ըլլար ըսին:

Առոյգ ու մարմնեղ սիրուն Արգարին,
Ըսին կը ծախէ հաճար ու գարին:

Հրակայ յաղթանդամ աղայ Մարուֆին,
Կը զրզուիս ըսին ձերմակ մօրուֆին ...:

Սեւ սեւ պեխերով հասուկ Արսակին,
Մի խաբուիր ըսին տեսին արտաֆին:

Ո՛հ, համոզուեցայ երթալ Գեորգին,
Ըսին կը սիրէ տղան, փրչաֆին:

Սիգանեմ ֆաշումո՛ք ունեցող Լեւոն,
Գը ծախէ ըսին խաշխաշ ու մեկոն:

Ուսումնասէր է քեռ Եղիշէն,
Տարբեր բան չ'ունէր ըսին եղինձէն:

Բաւք շեշտով խօսող կոկիկ Հայրապէս,
Շարական կ'երգէ ըսին ... դըպրապէս:

Սիրուն գովալիման գիտող Վարդանի,
Փուշով ծածկուած սին վարդ մ'է անի:

Միշտ կամաց խօսող, խոհեմ Խոսրովին,
Ան ձեռք ունի ըսին մանտղին:

Աղուոր գիր զրոող ժրպատեմ Համբիկ,
Ան ալ քող առնէ ըսին մեկ զամբիկ:

Երբ մեծահասակ միշտ շիֆ Թեոդիֆ,
Առնելու եղայ, սիրս ըրաւ քաֆ քիֆ:

Վայրուջ ֆօքիւմով պը՛ստող Խորէն,
Երբ առնեմ ըսի, զանեցայ փորէն:

Մարդու զաւակ է սա աղուոր Թովմաս,
Երբոր խօսեցայ զինք չ'ուզեց մամաս:

Քեզ համակրեցայ ըսի Արսաշէս,
Մայրիկըս գոռաց միթէ դուն եշ ես....:

Սա միջահասակ մի՛նեռն Զարմայրին,
Հանդեպ կիրքերս ինչո՞ւ կը մարին:

Փայտուն ու սեւուկ աչքով Պողոսիկ,
 Չեւ կրնար առնել է թոքով խօսիկ:
 Երկայնահասակ է սրղան Սրնբաս,
 Երբոր խօսեցայ ըսին ծակ սախաս...
 Հինա մօռուով գիւպպե Ծեքըրան,
 Չըլլար ըսին ան, տուի մը գաթըրան...
 Օր մ'աչ վրձնեցի խօսք սաչ Վահանին,
 Ըսին կը սիրէ սրբանց իր հանին:
 Ժարահաս ըսի ձեռք սաւ Հրանդին,
 Իր սիրքը խոցեց սիրոյ գերանդին:
 Ծաս հաւանեցայ միւսիւ Բարսեղին,
 Բայց ան աչ ըսին մոյին է սեխին:
 Միշտ թոքով խօսող գիրուկ Սիւննին,
 Կը սիրէ ըսին շարֆին ու մանին:
 Ու աչ վրձնասած ըսի ո'վ Աստուած,
 Ինչո՞ւ անտարբեր սիրս մ'ինձ չ'ես տուած:
 Իմ անունըս է խելոք Սողոմոնի,
 Հակաշոյեան մը կ'ուզեմ, ո'չ չորիկ ...

Օրիորդի մը յուշատետրէն
 գաղտնաբար ընդօրինակեց
 ԱՐՇԱԿ Դ. ԻՍՊԷՉԵՐԵԱՆ

ՕՐԱԳԻՐԱ

Թէ Ինչ՞Ո՞ր ԿԸ ԳՐԵՄ ԵՂԵՐ

Աշխարհիս մէջ մարդիկ կան, որոնք՝ իրենց բան գործ ըրած են զբաղիլ ուրիշներով, իբր թէ իրենք մտածելիք ոչինչ ունենային:

Այս մասին կիներուն անունը ելած է, մինչդեռ էրիկ մարդիկ անոնցմէ վար չեն մնար չիտակը:

Կիները կ'զբաղին գրեթէ միայն դրացիին արդուզարդովը, ու շատ շատ Տիկին Բերուզիկին աղջիկտեսովը, սակայն էրիկ մարդիկ, ո՞ւ անոնք շատ աւելի առաջ կ'երթան, մինչեւ իսկ հասկնալ կուզեն թէ ինչո՞ւ համար յօդուած կը գրեն, իբր թէ յօդուած գրելը մահացու մեղք մը եղած ըլլար, որ անշուշտ մոռցուած էր եօթը մահացու մեղքերուն կարգը դասելու:

Հաւատացէք որ եթէ առաջուց գիտնայի

Թէ շատեր գլուխս պիտի արգելեն, քանի մը էջ մրոտելու համար, վատա՛ն եղէք որ շատոնց վազ պիտի անցնէի այդ հավեսէս:

Յօդուածագիրները ի՞նչ անուն հանած են եղեր Աստուած իմ:

Ժամբան գացած ատենն մէյ մ'ալ կը նայիմ մէկը դիմացս կ'ելլայ, որուն հետ գործս բարեւ ապէն անդին չ'էր անցներ:

Կամաց մը կը մօտենայ, ու

— Օ՛, կը շնորհաւորեմ . . .

Մէյ մը վրաս կը նայիմ, որ արդեօք նոր հագո՞ւտ մը հագած եմ, ու այդ մարդուկին ըրած շնորհաւորութիւնը ատոր համար է, բայց զժրախտաբար հագուստներս չ'են փոխուած, ուստի կը հարցնեմ.

— Ներեցէ՛ք, ի՞նչ բան . . .

— Հըմ, ո՛ւրկէ ուր, եղբայր . . .

— Բայց կաղաչեմ ի՞նչ . . .

— Ժանըմ, իշտէ գրողները անանկ են, չի հասկնալու կուգան . . .

Անմիջապէս կը կռահեմ թէ՛ ի՞նչ ըսել կ'ուզէ, ու պատասխանելիք ոչինչ կուենեամ բաց ի

— Էյ երբեմն կ'ըլլայ, ըսել ու հազիւ թէ քանի մը քայլ կը հեռանամ՝ երկրորդ մը.

— Բարե՛ւ, հի՛ ՚ի՛, եղբայր ուրիշ ճիւղ մը չի գտա՞ր:

Իմ տեղս դուք եղէք, եւ մի բարկանաք: Աստուածնիդ սիրէք, ձեզի ի՞նչ կ'ըլլայ կոր, ես այս ճիւղը կընտրեմ կամ միւսը, ասոր մէջ ձեր խառնուելիքը ի՞նչ է:

Եւ որովհետեւ մէկ քանի յօդուածներ գրելու մեղքը գործած եմ, ալ պէտք է որ խօսք հասկցնեմ ամէն մարդու, նոյն իսկ մեր խանի զօմեխօնճիի ուշախին . . .

N'est-ce pas Monsieur Pascal.

ՄԱՏԱՆԻՆ ԴԵՐԸ

Աղջիկները շլացնելու ու վանոնք գլխէ հանելու համար փայլուն մատանիներ գործածողներ շատ տեսած էի, բայց երբեք չ'էի հանդիպած երիտասարդի մը որ մատանի դնէ մատը, ինքզինքը ամուսնացած կարծեցնել տալու համար:

Այս բանը բաթոսներու կըլեցնելը մասամբ մը կը հասկնամ, որ թերեւս կրնայ

պլտիկ արդիւնք մը ունենալ, բայց ելլել, աղջիկները խարել, երբեք:

Ճիշտ անցեալ օր հանդիպեցայ բարեկամներէս մէկուն, որ հակառակ ամուսնացած եւ նոյն իսկ նշանուած չ'ըլլալուն՝ աղեակն մը անցուցած էր ձախ ձեռքին մատնիմատը:

Պատճառը հարցուցի, որ սպալէս պատասխանեց:

— Եղբայր, ըսաւ, այնչափ զգուեցայ սա աղջիկներէն, որոնք բնաւ հանգիստ չ'էին թողուր զիս, ամէն անգամ որ տնոնցմէ մէկը տեսնէի, անպատճառ ամուսնութիւն մը կ'առաջարկէր, քանիցս հասկցուցի թէ՛ ես կարող չեմ կրնա մը պահել, քանի որ ինքզինքս անգամ ապրեցնելու համար բաւական դժուարութիւններ կը քաշեմ կոր, սակայն անոնք՝ օրուանց մօտիկ ընելու ըսածներուս, ու կարծես խօսք մէկ ըրածի պէս՝ ամուսնանալու դուն հոգդ մ'ըներ կ'ըսէին, ես ալ անոնց ձեռքէն ազատելու համար ուրիշ ճար մը չի գտայ՝ բայց միայն աղեակն մը չինել տալ ու մատս անցնել:

— Է՛յ պռավո՛, գտած գիւտիդ ըսելիք չի կայ, խելքդ սիրեմ ըսի, քանի որ կեանքիս մէջ սուսթին անգամը ըլլալով՝ ասանկ մէկու մը հոնդիպած էի:

Ես այնպէս կը կարծէի թէ՛ ամուսնացածներն իսկ չատ անգամ կուզեն պահել իրենց կրնա մը ունենալն, մինչդեռ այս սիրելի բարեկամս, առանց իսկ անկէ ունենալու՝ ինքզինքը ամուսնացած կը հռչակէ:

Այս չի՞ նմանիր այն դերասանին՝ որ բեմին վրայ հարիւր հազար Փրանքի հարուստութիւն մը ունիմ կ'ըսէ, մինչդեռ իրականին մէջ՝ հարիւր փարայ անգամ չի բռներ:

• • •

ԵՍ ԱԼ ԿԸ ԼՄՆԵԱՄ

Երբ տեսնեմ նորեկուկ միւսիս մը, որ տասը փարայի մայրամուսին՝ քսան փարայ ալ բռնակրողէք կուտայ տուն զրկելու համար:

Երբ տեսնեմ օրիորդ մը՝ որ հինգ վայրկեանի խօսակցութեան մը մէջ յիսուն անգամ « բնական է » կ'ըսէ:

Երբ թերթերու մէջ կը կարդամ թէ՛ այն ինչ օրը Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեց-

ւոյն մէջ եռոճայն երգեցողութիւն տեղի պիտի ունենայ:

Երբ տեսնեմ փառանձեմ տուտուի մը աղջիկը՝ որ գաւազան կը գործածէ, ու կիրակոս աղայի մը տղան որ խօսիս կը դնէ:

Երբ Գր. Մալխասին պաշտպանողականները կը կարդամ:

Երբ տեսնեմ դարավերջիկ պարոն մը՝ որ ածիլուելն յետոյ ժամ մը ինքզինքը հայելիներուն մէջ կը քննէ:

Երբ աչքիս կը զարնէ Պօսթընցի « իրելի բարեկամիս գրածը թէ՛ ինչպէս որ աղջիկներուն կուտութիւնը կը փնտռենք ամուսնութեան մէջ, նոյն բանը պահանջելու ենք նաեւ երիտասարդներուն քով:

Երբ տեսնեմ կրնա մը՝ որ փողոցէն անցած ատենը փէշերը մինչեւ ծունկերը վեր առած է:

Երբ Սաւաթիացի միւսիս ոմն՝ Կօլտէնպէրկէն ջութակի դաս կ'առնէ:

Երբ Թաղական աղայ մը՝ կէս ժամուան մէջ երկու անգամ գօսքիւմը կը փոխէ:

Երբ կ'ըսեն թէ՛ Բերայի հարուստ տիկիններէն մէկ քանին, եռոճայնը մինակ իրենք մտիկ ընելու համար յատուկ պատարագ մատուցանել պիտի տան, (երանի քեզի ո՛վ Չիլիենկիրեան) — խնդիր է գիտնալ թէ՛ այդ օրը եկեղեցւոյն դռանը վրայ ֆօլքլիք գրուած տախտակ մը պիտի փակցնեն:

Երբ վարժուհի մը կերգէ ու ես մտիկ կ'ընեմ:

Գասիֆե Էսսուրդըմ եօփ


Օսուես պասսըդըմ եօփ

Քիթապս Էյ պասսուրըմ

Սեկեհեկ պաշիս Էսրիմ եօփ:

Վերջապէս ես ալ լմնալով կը լմնամ, երբ ինձ կրմացնեն թէ՛ մեծ գրագէտ ոմն, հակառակ իր առթիւքի գլխուն, ու մէկ մէթր տասը սանթիմ հասակին՝ գրածներուս չի հաւնիր եղեր:

ՆԵՐՇԱՊՈՒՆ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԹՈՒԼԱԲՐԱՆՈՒԹԻՒՆ

Վերջին պահուն ստացանք խիստ շահեկան յօդուած մը Օրիորդ Սիրվարթ Սիրունեանէ, զոր պիտի հրատարակենք յաջորդ թիւով:

Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

Ազնիւունիի դագերանի

միլան աղբարիկս,

Քա ճանըմ օրդտի, անցած օր ցօրէկին երկու տիլիմ հացով երկու հատ թուրֆանտա չըրօզ չըխըն ըրի թօռանս համար տըրպատուն տարի, տնտեսուհին ըսաւ քի հաց ուտելու չինչան տահա, համար կարնէն կոր, ես ալ մէրախ ըրի քի հիմաճուքուան համարները նասլ կուտան կոր տէի վեր ելայ:

Քա աչուկներդ պաքնեմ աղբարիկս, ի՞նչ տեսնեմ, հակուած սքուած այվայ թիւլի տահա թէլ թէլ թապէ ճահիլ վարժապետ մը աղջիկներուն համար կուտար կոր:

Որիօրդ Աքապի սիրէմ բայը խօնարհուծիւն ըրէ ըսաւ, ան ալ պաշտէց, սիրեմ, սիրես, սիրէ:

Ույ օրդտի, խօջխօճաման կնիկ էմ ամայ ինչ մեղքս պահեմ, կամաց կամաց իմին սիրէլս ալ արթնցաւ, զավալը չօճօխները ի՞նչ խապահաթ ունին, խապահաթը պամպակը կըրակին քովը տընողինն է, վարժապետ խըսմիին մազը մօրուքը ճերմակ ըլլալու է:

Երկու տարի առաջ փրկիչը հիւանդտէսի կացէր էի մօտիկ մէկ խըսըմիս, կէսուրոջըս խընամիին կնկահօրը աղջիկանը դրացիինն աղջիկանը, տէսնալու վախթը չէր պաղճան քանթէնէին վրայ նստած էի, խօլթուիս տէյնէկիեօվ պղտիկ տըղայ մը ճերմակ մօրուքը երէսները կաս կարմիր մարդու մը ետեւէն կը պօռար կոր, Մէզպուրեան էֆէնտի տէի:

Այս փառաւոր մօրուքը մարդը, արեւը սիրեմ, թըպխը նոյ նահապետը կըլմանէր կոր, այս պղտիկ տղան կընաց ձեռքը պագաւ, ան ալ անոր ճակատը պագաւ, զէհէր թօռը ըլլալու է ըսի, քա օրդտի, մէյ մալ ինչ տեսնէմ, այս չօճօխ ըսածս ճերմակ մօրուքը քստիկ մարդ մըն էր, ինծի մէռաք էղաւ, կացի իրէն հարցուցի քի ինչն էս էֆէնտիին, վարժապետս է ըսաւ, Աստուած երկար օրէր տայ, վարժապետը ասանկ ըլլալու է, ույ հէմէն ապրին մնան ասանկներ, քանի մը հատ մազերինն մօրուքինն ճերմակ վարժապետներ կան էղէր:

Անցած օր երկու կըտրիճներ իրարու հետ վիճակնարանութիւն կընէին կոր, մէկ հատը ըսաւ քի տուն կ'չիկէն վեր մեյլար, ես Պէռպէռեանի աչակերտ եմ, քեզի տասը տարի դաս կուտամ ըսաւ, անանկ խօշս էկաւ քի, իշտէ սիրէմ բայը սօրվէլու է ամայ, ասանկ սիրելու ասանկ սիրուելու է:

Հիմաճուկուանները սիրէմ բայը սօրվէլուն պէս կը կարքըվին, սիրէմը կը մօրնան, լեզուին կերկնայ, բայը սօրված էն եայ, կը պաշտէն անոր ասոր բայ տալ, սօղրայ ալ հայտէ Պատիրեարքարան, չեն ալ խպնիր ան ճերմակ մօրուքը եպիսկոպոսներուն, տէր պապաներուն առջեւ անանկ չի վայլելու կանելիք խօրաթաներ կընեն քի զավալըներուն ականջները կաշտոտեն:

Խելքս կըլտա եկաւ, տրպատունէն չիտակ տուն վազեցի, էրքէկ կատուս թօպխարու սանամօրս պարօնտատին թէյգէին աղջիկանը տունը խրկեցի, խօրոզս ալ մօռթելու պէս թէնճիրէն տըրի խաչեցի, հիմայ հինգ հատ հաւերս որբեվարի մնացին, ամայ աղջիկանս աչքն ալ մարտի կատուի երէք օրուան եավրուի պէս կոց կը մնայ, քայ եավրում, շատ խելացի կընիկ եմ, հէմ ալ տուրսունական, իմին սօրուած համարներս կայ նէ կըրէմ քի անմէն մարդ ալ սօրվի:

Թ է բ, թէր, բի սի բի սի թէպսի:

ս ա, սա, թ ե, սաթէ տունին խզմէտները կընէ կոկիկ կոկիկ սաթէնիկ:

Թ ո ղ, թող, լ ա, թողա իշալահ աղջիկանս հետ կայնած կը տեսնամ եան պէ եան թողլաեան:

Թաքդ բսապդ պագնեմ օրդտի:

Թ ա, թա, ղ ա թաղա մէջերինն անկուտիններ ալ կան թաղական:

ո ր, որ, բ ա, որբա էսնաֆ դասակարգէն տուող չի կայ մէկ տասնոց որբանոց:

հ ի, հի, լ ա ն հիւան դ ա հիւանդա հարուստները պանքնորդներ կուտան հինգ հինգ ոսկինոց հիւանդանոց:

Քա եայ հազարաւոր տուողները Աստուած օրերինն շատ ընէ, քէսններուն պէրէքթ տայ, հող պոնեն տէ ոսկի կտոր, Աստուած զաւակներին պահէ, քա օրդտի

հարուստը չըլլալու ըլլար նէ ան որբերուն, հիւանդներուն հալը ինչ պիտի ըլլար:

Քա ճանրմ օրդտի, քեզի զահմէտ մը ունիմ տալիք, եանի եա ընէս կայ եայ, ինծի կոնակովդ Երուսաղէմ տարածի չափ խէր մը ըրած պիտի ըլլաս, երկու չիֆտ լալըն ունիմ, մէկը բացը՝ պաղնիքիս նէ, մէկըն ալ մուտվախիս նէ, ան ալ ցած է, հիմայ ասոնց մէյակէկ թէքին թասմաները բրդեցաւ թէք թէք մնաց, մէկը ցած մէկն ալ բարցր, հիմայ ճանչորներու շախա կընեն կոր, թօփալ թալիթա կըսեն կոր, զաւակս ալ տէրտ կընէ կոր, քա եավրում, աս ալ տէրտ ընելու պան է, թօրալութիւնը խապահատ է, նամուսի դպնելիք պան է, հիմայ քէսէր մը չունիմ քի դասմաները կամէմ, քեզի խրկէմ տէ խերուտ աղւոր մը կամէս տէ սա զաւկիս լէզուէն ինծի ազատէս, շատ եալվար կըլլամ, արեւըդ սիւրէմ եավրուս, Աստուած պանիդ գործիդ յաջողութիւն տայ ամէն:

ԹԱԼԻԹԱ

ԳԵՂԱՐՈՒԵՍԸ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՉ

ԱՅՑ ՄԸ ՍԵՆԿԵՐ ԸՆԿ. ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԻՆ

Չորրորդ անգամ ըլլալով, Սինկէր Ընկերութիւնը կազմակերպած է իր կարի մեքենաներու նըրարուեստ արտադրութեանց տարեկան Յուլեանդէսը, նախորդներէն գերազանցապէս աւելի՝ ճոխ ու աւելի՝ շահեկան, մասնագէտներուն համար մանաւանդ: Երկու շաբաթ է ի վեր, այդ Ընկերութեան Կեդր. Տնօրէնութեան ընդարձակ շէնքին սրահները (Բէրա, Պօն-Մառչի դէմ) ժամադրաւայր դարձած են երկսեռ այցելուներու, ամէն ազգէ, ո՛չ միայն հարուստ դասակարգին՝ որուն համար հաճելի ժամանց մըն է արդէն երթալ տեսնել հոն պարզուած գիւթական տեսարանը, այլ նաեւ միջակ դասակարգի ընտանիքներու, — կիներ ու աղջիկներ որոնք այլապէս կը հետաքրքրուին, իրենք իսկ գործածող ըլլալով Սինկէրի մեքենաներուն, կ'ամ առտին պէտքերու համար եւ կ'ամ իբր բանւորուհի: Այնպէս որ,

այս Յուլեանդէսը, հակառակ իր ճոխ արտադրութիւններուն ու պերճանքի առարկաներուն, — միշտ նոյն մեքենաներով պատրաստուած, — high-lifeին միայն յատուկ չէ, եւ ասեղնագործի բոլոր ճիւղերուն վերաբերեալ ուսումնասիրութեանց առիթ կընծայէ ամէնուն, օգտակարապէս:

Այցելուն նախ կ'առաջնորդուի առաջին սրահը, ուր կը տեսնէ գեղարուեստական փափուկ արտադրութիւններ, ընտիր թալլօներ եւ այլն, այնքան զմայլելի կերպով պատրաստուած որ դժուարը կուզայ հաւատալ թէ իրօք կարի պարզ մեքենայէ մը ելած են անոնք. եւ սակայն այս պատրանքը շուտով կը փարատի իրականութեան առջեւ: Սինկէր Ընկերութեան յաճախորդուհիներն են որ պատրաստած են զանոնք: անոր մեքենաներուն վրայ, եւ իւրաքանչիւրը իր անունը կրող քառթ մը կցած է իր ասեղնակարին: Սինկէրի յաջորդական ցուցահանդէսները այնքան օգեւորութիւն առաջ բերած են գեղեցիկ սեռին մէջ, որ բազմաթիւ տիկիներ ու օրիորդներ անօրինակ եռանդով մը ինքզինքնին տուած են մեքենայով ասեղնագործելու ճիւղին եւ այսօր յաջողապէս կը մրցին Ընկերութեան վարպետ ուսուցչուհիներուն արտադրութեանց հետ, ինչպէս կը տեսնուի այդ առաջին սրահին ցուցադրումներէն: Այս իրողութիւնը ինքնին ի վեր կը հանէ, անգամ մըն ալ, սա պարագան թէ՛ այս Յուլեանդէսներուն գեղեցիկ արդիւնքներէն մէկն ալ եղած է՝ կարի մեքենայով ասեղնագործելու եռանդը արծարծել, թէ՛ հաճոյքի համար եւ թէ՛ իրեն ապրուստի միջոց, Վերջինին վրայ կուգենք ծանրանալ մասնաւորապէս, այս էջերուն մէջ, վասն զի պզտիկ թիւ մը չեն կազմեր այսօր այն հայ կիներն ու աղջիկները, որոնք մեքենայով ասեղնագործութիւնը իրենց համար ասպարէզ ընտրած են, այդ համեստ ու ճաշակաւոր աշխատութեամբ դրամ շահելով: Նոյն իսկ դպրոցական հասուկ աշակերտուհիները, որոնք կը պատրաստուին կեանքի ասպարէզը թեւակոխելու, — էսսնաֆ ընտանիքի զաւակներ ընդհանրապէս, — պիտի կրնան օգտուիլ հիմակուց՝ Սինկէրեան Յուլեանդէսը այցելելով, մօտէն տեսնելու

համար կարի մեքենաներուն ընծայած պէս-
պիսութիւնները ու գեղատեսիլ արտադրու-
թիւնները: Այնտեղ, զննութեան առարկա-
ներ կան իրենց համար, թէ՛ վարգաքնելու
իրենց գեղարուեստական ճաշակը ու ընդու-
նակութիւնը, եւ թէ՛ մօտաւոր ապագայի
մը մէջ իրենց ձեռնարկելիք ասեղնագործու-
թեան մասին ընտրութիւններն կատարելու:
Սոյն սրահին մէջ իրենց ասեղնագործութիւն-
ները ցուցադրող յաճախորդներու անուննե-
րու քով, ցաւալի է ըսել թէ շատ քիչ հայ
անուններու միայն կը հանդիպինք: Ասիկա
այնպէս կը կարծենք թէ՛ ասեղնագործու-
թեան մասին անտարբերութենէ մը աւելի,
ասպարէզ գալու եւ իր տաղանդը արժեց-
նելու եւ գնահատել տալու մասին տեսակ մը
երկչոտութեան, անհամարձակութեան ար-
դիւնք է: Բայց անկեղծ ըլլալու համար
պէտք է յայտարարենք թէ՛ այս փոքրաթիւ
հայուհիները, որ մասնակցած են Սինկէրի
Ցուցահանդէսին, մասնաւորապէս յիշենք ա-
նոնցմէ Օր. Աննա Սիւան, Օր. Խօրասանճը-
եան, Օր. Գարամանեան, Օր. Թաշճեան,
Օր. Քիւլանեան, խիստ պատուաբեր ու փայ-
լուն տեղ մը կը գրաւեն իրենց ձեռագործ-
ներուն ցուցադրութեամբ:

Նկարագրութիւն մը, որքան ալ մանրա-
մասն, դժուարաւ պիտի կրնար հարազատ
գաղափար մը տալ այս չքեղ Ցուցահանդէ-
սին վրայ, եւ լաւագոյն բանը զոր կրնան
ընել ամէն անոնք որ կը հետաքրքրուին ա-
նով ու դեռ առիթը չեն ունեցած տեսնելու,
երթալ այցելելն է, զորք ջերմապէս կը յանձ-
նարարենք, մանաւանդ մեր ընթերցողուհի-
ներուն:

Միւս չորս սրահներուն մէջ ցուցադրուած
ասեղնանկարները ո՛չ նուազ եզակի հրա-
պոյր մը ունին՝ երանգներու բնականու-
թեամբ, գործուածքի նրբութեամբ, ու կը-
նոջական ճաշակի տեսակէտով: Բնութեան
տեսարանները, ծառերը, ծաղիկները այն-
քան ճշգրիտ կերպով պատկերացուած են
անոնց մէջ, որ կարծես տաղանդաւոր նը-
կարչի մը վրձինը կենդանութիւն տուած է
անոնց: Գեղեցկին ու գեղարուեստին սիրա-
հարները, երկարօրէն կանգ կառնեն այդ
ասեղնանկարներուն առջեւ, կարծիքներ փո-

խանակելով, գնահատումներ յայտնելով,
ուրիշներ կը հետաքրքրուին բուն իսկ աշխա-
տութեան եղանակը տեսնելու եւ յարակից
խցիկները կը մտնեն ուր Ընկերութեան կա-
րուհիները, մեքենաներուն առջեւ նստած,
ուշադիր նայուածքով ու անխոնջ մատնե-
րով շարժման մէջ դնելով ասեղը որ կ'ելեւե-
ջէ, կը յառաջանայ կտաւին վրայ՝ կարծես
տեսակ մը մոգականութեամբ դրոշմելով ա-
նոր վրայ՝ դէմը դրուած նկարը, գունագեղ
ու սիրուն:

Սինկէրի Տնօրէնութիւնը իր այս Ցուցա-
հանդէսներուն կազմակերպութեան գաղա-
փարն յղանալով ու գործադրելով, առիթ
ընծայեց հասարակութեան՝ ընտելանալու իր
կարի մեքենաներու այն յատկութեանց որով
անոնցմով ասեղնանկարչութեան հրաշակերտ-
ներ կ'արտադրուին: Այս ընտելացումը չորս
տարիէ ի վեր յարաճուն կերպով զարգացաւ,
յառաջդիմեց ու ծաւալեցաւ նաեւ մեր կնո-
ջական շրջանակներուն մէջ, եւ տարակոյս
չիկայ որ ներկայ Ցուցահանդէսը աւելի՛
պիտի նպաստէ սոյն օգտաշատ արդիւնքին:
Արդէն իսկ առօրեայ այցելուներու բազմու-
թիւնը պերճախօս արտայայտութիւն մըն է
սոյն գնահատման. բարձրաստիճան պաշտօ-
նատարներ, դեսպանական մարմնոյ անդամ-
ներ, արուեստագէտներ, գրագէտներ, տի-
կիներ եւ օրիորդներ, եւ ժողովրդեան ա-
մէն դասակարգերն անխտիր իրենց հիացա-
կան տպաւորութիւնը կը կրեն հոն, եւ ա-
նոնք որ տակաւին չեն փութացած՝ անշուշտ
պիտի ուզեն օգտուիլ այս եզակի առիթէն,
որ աչքը կը հմայէ, միտքը կը պարարէ, գե-
ղարուեստին հետ խորհիլ տալով միանգա-
սայն կեանքի նիւթական պայմաններու մէկ
կարեւոր տարրին, — ասեղնագործութեան
վրայ:

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

Հ Ի Ն Է Ջ Ե Ր

Վ Ա Ս Ն Հ Է Ր Ի Ս Ի

Բարկենդան է մի՛ մեղադրէք

Ջոր ինչ ասեմ մի՛ տնադէք

Ջհէրիսըն թէպտիրըն արէք

Եւ կանխկիկ ուտեցուցէք:

Ա՛յ հէրիսայ իմ սիրելի
Ամենեցուն դու ցանկալի,
Թ'երուսաղէմ ու ամէն տեղի,
Առանց քեզի մատաղ չլինի:

Ա՛յ հէրիսայ իմ գովական
Ոչ «ք չկայ քեզի նման
Ամէն մարդիկ առջեւդ դողան
Եւս առաւել ես անարժան:

Ա՛յս հէրիսայ դու փառաւոր
Կեղեկին է քեզ սպասաւոր,
Խորվուն քան քեզ մեծ զօրաւոր,
Փիլաւըն քեզ նմանաւոր:

Ա՛յ հէրիսայ ապուր օրհնած
Ապուրներուն մէջ ես գոված,
Մեռելք վքեզ ապսպարած
Ի քեւ փրկին ամէն մեղաց:

Ով զիւր մեռել կուսիրէ,
Պատարագաւ զնա յիշէ,
Գիշերն ի բուն զքեզ յիշէ,
Եւ վաղմէն առատ բաշխէ:

Ամէն մարդոց հեշտ ուտելի,
Եւս առաւել ծերոց ասի,
Առանց ծամել ի կուլ տանի,
Եւ իւր հոգին փառաւորի:

Ա՛յ հէրիսայ իմ գովելի,
Բազում բարեաց ես արժանի,
Շէքէրն եւ մեղրն ի դէմ քեզի,
Բնաւ ի քեզ չեն նմանի:

Ա՛յ հէրիսայ իմ գովելի,
Արժան լինիս դու իմ բերնի
Կակուղ լոշով ի կուլ տայի
Կարմիր գինով զքեզ թաղէի:

Ով Թոխաթցի Մինաս դպիր,
Ի հէրիսին փէշին կպիր,
Թուցուր զգօտիդ եւ կշտացիր,
Փափագանացըդ քո հասիր:

Քահանայից դասք երամով
Յորժամ ընթրիս լսեն քենով,
Ջրուն ընծեն յոյժ խնդալով
Թէ հէրիսայ ուտենք յովով:

Յորժամ որ առաւօտ լինայ,
Յեկեղեցին փութան նոքա,
Այլ ոչ աղօթք, մտմէն գայ,
Թէ հէրիսան ե՞րբ պիտի գայ:

Յերբ հերիսան բազմեցուցին,
Յառջեւ քահանայից եղին,
Տիկ մի գինի այլ հետ բերին,
Եւ մատուակն ի հետ նորին:

Ա՛յ հէրիսայ, զիս խեղճ արիւր,
Որ ի լեհաց երկիրն ձգեցիր,
Տարին անգամ չես հանդիպիր,
Որ ինծի ըզքեզ ի կեր տայիր:

Ա՛յ խիստ անոյշ ես հէրիսայ,
Երբ արդար եղղ շատ լինայ,
Կակուղ հացիկ ընկերանայ,
Ով «ր ուտէ ուրախանայ:

Այլ ի՞նչ գովանք տանք հէրիսի,
Էրնէկ անոր որ հանդիպի,
Ես փափաքիմ ի դէմ քեզի
Որպէս մեղու ի դէմ ծաղկի:

Վարդապետաց դասք ամենայն,
Կրօնաւորքն, միաբան,
Յորժամ լսեն զհէրիսան
Ամենեքին զվանքն ուրանան:

Երիցականքն ամենայն
Ջերէցկնոջն թարկն տան,
Ջամէն ուսումն մոռանան,
Վազեն լ'երթան ի հերիսան:
Կերակրոց մէջ ես դու գոված,
Լուսաւորիչ զքեզ օրհնաց,
Արար զքեզ եւ հաստատեաց,
Եւ կերակուր մեզ պատրաստեաց:

Ի թվականիս հազար ամի,
Եւ տասներկու թիւ աւելի,
Եւ ի յամսեանն փետրվարի,
Օրնէր ուրբաթ եւ համարի:

Բայց ես զարիպս Թոխաթցի,
Մինաս անուն մեղաց գերի,
Եկի անկայ Լոյլ քաղաքի,
Կարօտ մնացի ես հէրիսի:

Ծեր եմ ալեօք սպիտակ,
Ակուայ չկայ բերանս դատարկ,
Որ հէրիսայ լինի տաք տաք,
Կակուղ պիտոնոց մեղր ու կարագ:

Երգս է գրած Մինասի,
Անմիտ տխմար եւ փանաքի,
Ձեզ արմաղան ընծայեցի
Ջիս յիշեցէք սիրով սրտի:

Ծանօթութիւններ. — Ժ. Դ. դարու հայ բանաստեղծներու ցանցաւ չարքին մէջ նը-
չանաւոր դէմք մըն է ՄԻՆԱՍ ԹՈՒՆԱԹՅԻՆ:

1551ին ճամբորդած է Մոլտավիա, եւ
1563ին ատենները Լէմպերկ քաղաքը մեռած:

Մինաս սարկաւագ եղած է, բայց չենք
գիտեր թէ արդեօք եկեղեցական այլ աս-
տիճաններու ալ բարձրացած է:

Իր տաղերը բաւական թիւ մը կը կազ-
մեն, որոնք 1884, 86, 87 թուականներուն
հրատարակուած են:

Իր գեղեցիկ տաղերէն մէկն է այս «Հե-
րիսայի վրայ գրածը, որուն ինչ ինչ ծանծ-
րացուցիչ եւ կրկնութիւններ եղող մասերը
յապաւելով կը հրատարակենք: Մինասի լե-
զուն, ինչպէս կ'երեւի բաւական մաքուր աշ-
խարհաբար մըն է, բայց իբր տաղաչափ,
արուեստին անգիտակ է եւ իր տողերը տեղ
տեղ կը կաղան:

Մինաս, ինչպէս նաեւ այս կարգի հին
ռամկագիր բանաստեղծներ, պէտք եղածին
պէս չեն ուսումնասիրուած դեռ դժբախտա-
բար, եւ այս քանի մը հակիրճ ծանօթու-
թիւնները, զորս կրցանք քաղել Հրանտ
էֆ. Ասատուրէ եւ ուրիշներէ, չեն կրնար
Մինասին իրական արժանիքը եւ կեանքը
ցոլացնել իր ամէն կողմերովը:

Բերա

ԳՐ. ՀԱՄԲԱԿԵԱՆ

ՁՈՒԱՐՃԱԼԻՔ

— Սա մարդը կը ճանչնաք, ո՞վ է:

— Այո՛, այդ մարդը մեծ մարդ է, հա-
զարաւոր մարդաց արցունքը որբած է:

— Ուրեմն մե՞ծ բարեբար մըն է:

— Ո՛չ, թաշկինակի գործարանատէր է:

Մարդուն մէկը դրամատան մը տեսչու-
թեան կը ներկայանայ պաշտօն մը խնդրե-
լով:

Տեսուչը.

— Ի՞նչ կրնաս ընել:

Պատասխան չկայ:

— Պիտի պատասխանե՞ս:

— Խուլ եմ, տէր իմ:

— Միայն խուլ ես նէ լաւ, վաղուընէ
սկսեալ պաշտօն մը ունիս պահանջքի սեն-
եակը:

* * *

— Ճաշարանագետ, այս ձուկը անցած
օրուանին պէս թարմ չէ:

— Ընդհակառը պարօն, նոյն ձուկն է:

* * *

Տանը մէջ կատուն երեք ձագ կը ծնի,
բայց հոգէ ազատելու համար տնեցիք մէկը
կը պահեն երկուքը կը խեղդեն:

Քանի մը օր ետք տան տիկինը երկուոր-
եակ մը ծնի:

Անդրանիկ տղան փոքրիկ Յակոբ, ուրա-
խութեամբ դիտելէ ետք նորածինները.

— Ասոնցմէ որը պիտի խեղդենք հայ-
րիկ, կը հարցնէ:

* * *

Նշանածներու միջեւ.

— Աղանիս, գրել կարդալ գիտե՞ս.

— Գրել այո՛, բայց կարդալ ոչ.

— Ինչո՞ւ համար.

— Որովհետեւ, որու որ նամակ գրեցի,
պատասխան չառի որ կարդալով՝ կարդալ
սորվէի:

* * *

— Մարդ մը երբ յանկարծ հիւանդա-
նայ նէ, մինչեւ բժիշկին գալը ի՞նչ ընելու է:

— Կտակը գրելու է:

* * *

Թէ ինչպէ՞ս կը համառօտագրէ Յակոբ
Պարոնեան, կարգ մը բացատրութիւններ:

Գլխուս վրայ. — Ես քուկին սպասաւորդ
չեմ.

Ո՛ւր տեսնուիմք վաղը. — Հեռացիր քո-
վէս.

Սուրճ մը կառնե՞մ. — Գործ ունիմ, բա-
ներնիդ գացէք:

Կը խոստանաւ. — Բան մըն ալ չեմ
կրնար ընել:

Կրնա՞նք քիչ մը տեսնուիլ. — Փոխ տա-
լիք ստակ ունի՞ք:

Աղան դուրս չեղեր կոր. — Հիւր ըն-
դունելու ժամանակ չունինք:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՏԸ-ԳԻԻՂ. — Տեղւոյս հանրածանօթ միւսին, որ իրեն բան գործըրած է անհրաւէր անոր ասոր տունը մտնել, և ստայօդ զրպարտութիւններով ու քսու բամբասանքներով ընտանեկան պատիւներ լզրծել, թող զգուշանայ օր մը խայտառակաբար վռնուել:

Ծ. Խ. — “Qui s'excuse, s'accuse”:

ԲԵՐԱ. — Շիք պարոն մը Լիւքսէմպուրկ պիլառտօ խաղացած ատենը գրպանէն դպրոցականի վիճակացոյցը վար ձգեց:

Ծ. Խ. — Դտնողը թող այդ պարոնին ծնողքին տանի, և ստորադրել տալով պատկանած դպրոցին վերադարձնէ:

ԿԵՏԻԿ-ՓԱՇԱ. — Հոռոփսիմա տուտուին և Պաղտասար աղային միջեւ օղափոխութեան վէճերը այնքան տաքցան որ խոհանոցի անօթները ստիպուեցան միջամտել:

Ծ. Խ. — Իբր հանդարտեցուցիչ դեղ մը ՕՏԱՓՈՒՈՒԹԻԻՆ կը յանձնարարենք, փոխանակ ՕԴԱՓՈՒՈՒԹԵԱՆ:

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒ. — Մուխթարաւ շախ թէլ պըյըլ միւսիւ մը, Զատկուան ուշ մնացած այցելութեան մը երթալով կերակուրի նստեր և 50 հատ հաւ կիթ է կերեր:

Ծ. Խ. — Այ մարդ Աստուծոյ, ամօթէդ ինքզինքդ ալ չկերար:

ԲԱՐԻՁ. — Այս օրերս կապրիէլ անուն թխադէմ աղջիկ մը դատարանի առջեւ ամբաստանուած է իբրեւ իրեն դիմող երիտասարդներուն գրպանները թեթեւցնող:

Ծ. Խ. — Ինչո՞ւ կը բողոքեն կորայդ թեթեւցած պարոնները, քանի որ այդ շնորհալի օրիորդը երբ մէկ կողմէ իրենց գրպանները թեթեւցեցեր, միւս կողմէ ալ անոնց սիրտերը լեցուցեր է:

ԷՏԻՆՃԻՔ. — Տ. Կումսի քահանան հոս եկաւ, իրեն հետ բերելով կագ ու կուր: Թաղ. Խորհուրդը այս շնորհունակին հեռացումը խնդրած է Պրուսայի առաջնորդարանէն:

Ծ. Խ. Հարցուցիք իրեն թէ կը փափաքի՞ վերստին պարապել այն արհեստով, որով կը պարապէր քահանայ չի ձեռնադրուած:

ԳԱՍԸՄ-ՓԱՇԱ. — Տեղւոյս երաժիշտն ալ մտադիր է եռաձայնի խումբ մը կազմել մայիս 1ին ալաշեշխեան եղանակաւ:

Ծ. Խ. — Էյուպի վերի և վարի թաղերու եկեղեցիներու երաժիշտները ինչ կը բանին:

ԳԱՐԱԹԱՇ-ԻՉՄԻՐ. — Թաղ. Խորհրդոյ և իր նախագահին որոշմամբ լացին գիշերը եկեղեցիին մէջ քարոզեց տիրացու լուսարարը, բնաբան ունենալով “Հա՛յր, թող դոցա զի ոչ գիտեն զինչ գործեն”: Միւս կողմէն ալ քանի մը չարածնիններ մութին մէջ բեշ բեշ կը կարէին մրմուլով “մինչդեռ ժամանակս ի ձեռս է կարեսցուք զմիմեանս”:

Ծ. Խ. — Դուրեան Սրբազանին տեղեկութիւն տրուած է լուսարար-քարոզչին նկատմամբ:

ՕՐ ՆՈՐ

ԼՈՐԲ ՆՈՐ

ՈՏԱՆԱԾՈՐ

Ճառով լրանեմք թէ Հիւանդանոցի
 Նոր շինուած շէնքեր նրման հաւնոցի
 Պիտի փլցուի շինուելու կրկին,
 Զի այս անգամ ալ սխալեր կարկին:
 Դրուած բոքրեղներ չեն եղեր զօրեղ,
 Ծաւարպետներն Համաւնեան, Կիւրեղ
 Իրար են անցեր, գումարեն ժողով,
 Եկելու համար շէնքերն այս ... կողով,
 Իրաւ այս շուրջ զարմանի պատճառե,
 Զի այդ վարպետներ բարձր կաճառե
 Փայլուն վիայուած՝ գործին են գիտակ,
 Ինչպէ՛ս կը կանգնեն շէնք մը անշիտակ:

X

Հրամանով նոր Պատրիարք Հօրմէն
 Զղատեան Վ.ի խնդիր մօտ օրէն
 Պիտի ֆննուի. երեք հաս կղեր,
 Այս մասին ժողով պիտի ընեն եղեր:
 Զղատեանին ալ ուզածըն այս եր
 Որ բարձրասանք վերջապէս կ'ասեր:
 Հիմա որ խնդիրն է դասասանի
 Պիտի կրնայ տալ վկայ փաստ անի,
 Թէ ինք պահած է բարձր կոչումն իր
 Վարդապետական, մաքուր, անբասիր:

X

Կ. Մայեանեան « Հանրագիտակ » ի
 Գործակալն ազնիւ Իզմիր ֆաղափ,
 Եաքթուս նշաներ բարի աղջիկն իր
 Տիար Փափագեան երիտասարդին ժիր:
 Խմբագրութիւնն ալ, գոյգին երջանիկ
 Մաղթե ըլլալ միշտ սիրով ընտանիք:

X

Անագիտեն ԷՍ ՍԷ, յանգով հարուստի,
 Զորս կը գտնէ արդեօք յար ուստի՞,
 Դայ պնեն զրչով մեր « Հանրագիտակ »
 Պառկելով անշուշտ ճոխ յանգ ակի տակ:

X

Կազմով վիթխարի երեք հաս ճամբորդ,
 Ոսկով կը ֆաշեն ճամբայ խորս ու բորդ
 Ընկելու համար շրջանը երկրիս,

Եւ որոնք Ուրբաթ օր հասան Պոլիս:
 Ասոնց երեքն ալ են Հոյսնաւոցի,
 Գրեթէ կարօտ ստորեայ հացի:
 Հաճե ֆաղափը անոնք պիտի հասնին
 Զշրիս հազար իննը հարիւր տասնին:

X

Փութացեալ երթալ Սիւնեան քօնսեռ,
 Զուրակաւ դաշնակ պիտի հնչեն հոն սե՛ր:
 Անոնք որ գիտեն ընթացիւնէ հանդիս,
 Զայնի նուագի, թող չառնեն անեստ
 Գեղարուեստական առիթն այս գեղօն,
 Վաղը կիրակի. բարձրն Օսկօն:

X

Կարօտ ուսուցչաց օգնութեան սրնաւով
 Որուն հասոյթն է ոչ նըւագ անձով
 Թոշակ սահմանեց հարիւր դուրուշի
 Ուսուցչի մը որ հիւանդ տառապի:

ՍՏԱՅԱՆՔ ՎԵՐ. Գ. Ն. Երչմանեանի
 «Տարերք Աւետարանի», անուն թարգ-
 մանութիւնը, որ գեղարուեստական
 գեղեցիկ տպագրութեամբ մը լոյս տե-
 սած է Վ. և Հ. Տէր-Ներսէսեան ծանօթ
 տպարանէն: Կը բաղկանայ 144 էջերէ,
 գինն է 2 դր:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Բազար ֆոյ. — Տօթ. Յակոբ ԷՓ. Զէյ-
 րէքեան, ընդ փոյթ պատասխանի կ'ըստա-
 սենք:

Ամասիա. — Գէորգ ԷՓ. Նիկողոսեան,
 նոյնպէս:

Տրապզոն. — Պօլոս ԷՓ. Զահիկօ. —
 Վեցամեայ բաժնեգինը ստացած ենք:

Էրզրում. — Գործակալութիւն. — Պա-
 տասխանի կ'ըստասենք:

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆ ԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ակի ճաստեւի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՄ ՄԵՈՒՆԴ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ մանրէային մասերն եզան մսին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆորէնը ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոյիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, գնահատուած համբաւաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անսիրտութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անսիրտութիւն»:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղորէից մթերանոցներու քով:

50—40

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԱՆԻՆԵՐՈՒ

Արմեց, Կանաւց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Գ. Պոյիս, Մուրսան Հաւաւ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանք տոկունութեամբ և գիներու անփոփոխութեամբ շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց խոշորիկներու և տղայոց չիք և գիմացկուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

50—34

ՄԱԶԻ ՆԵՐԿԵՐ

Մասնագէտ Արամ Էֆէնտի Սօղանճեանի պատրաստած ջուրը քիմիագէտները տարրալուծած եւ քննած ըլլալով, վկայած են թէ՛ ֆլուսա-կար նիւթերէ բոլորովին զերծ է:



Յիշեալ ջուրը մաշկերը գունաւորելու համար պէտք եղած գիտական յատկութիւնները ունի եւ այս մասին Կայսեր. Թժշկական վարժարանի որոշմամբ ամէն կողմ պէտք եղած հրահանգները տրուած են, ասկէ զատ Ճերիտեի Վեգաի Թըպպիյէի միջոցաւ մասնաւոր աղբարարութիւններ եղած են:

Այս գեղեցիկ եւ առողջապահիկ գիւտը շատ մը մարդոց կողմէ կեղծուած է, որոնք ապաւոր-լիկ ջուրեր պատրաստելով իբրեւ տեղական ապրանք կը ծախեն:

Եթէ կուզէք բոլորովին մաքուր եւ առողջապահիկ կերպով գունաւորել ձեր մաշկերը, զգուշացէք այս կարգի ազտոտ ու գունաւոր օտար ջուրերէն, եւ աւելի մաքուր ու զուտ ստանալու համար դիմեցէք Մահմուտ բաշա ճառոտէի, յիշեալ Արամ Էֆ. Սօղանճեանի 121 թիւ անուշահոտութեանց վաճառատունը, ուր պիտի գտնէք մաքուր ջուր ձեր մաշկերուն գունաւորման համար:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Կը յանձնարարուի մասնաւորապէս ուշադրութիւն ընել Ա. Սօղանճեան ստորագրութեան:

Հ Է Ր Ճ Ա Յ Ի

Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօրի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուններ, նաեւ ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաեւ կահ/ւորասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, Ետնի մուշամպաներ, կրամֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա.ՊԱՌԻԿԻ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50 — 25

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Ա Յ Ս Մ Ա Ս Ը

ՏՐԱՄԱԴՐԵԼԻ Է ԾԱՆՈՒՑՈՒՄԻ